# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 37

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ*
*ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ*
*ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ*
*ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Ա. Զաքարյանը, Վ. Մովսիսյանը, Վ. Մկրտչյանը, Ա. Սարգսյանը, Տ. Գալստյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Շուխյանը, Ս. Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

**<u>Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը</u>**

2. Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. Աշտարակ համայնքի 2020 թվականի բյուջեի առաջին կիսամյակի հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

4. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

5. Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող T1701 բուլդոզերը աճուրդ-վաճառքով օտարելու համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

6. <<Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2019թ. N 75-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

7. Անհատույց օգտագործման համար տարածքներ տրամադրելու մասին:

*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

8. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

9. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

10. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

11. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

12. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

13. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

14. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

15. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

16. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

17. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

18. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող, Ն. Աշտարակեցու հր. N7 հասցեի հարևանությամբ գտնվող անշարժ գույքը աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

19. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

20. Աշտարակ համայնքի ավագանու 21.05.2020թ. N 34-Ա և N 35-Ա որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Կ. Շահազիզյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 2* - *Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը և առաջարկեց Աշտարակ համայնքի 2020թ. տարեկան բյուջեում կատարել անհրաժեշտ փոփոխությունները: Զեկուցողը նշեց, որ փոփոխությունների հիմնական նպատակը սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորումն հավուր պատշաճի ապահովումն է:

**8- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Կ. Շահազիզյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 3* - *Աշտարակ համայնքի 2020 թվականի բյուջեի առաջին կիսամյակի հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը և առաջարկեց ի գիտություն ընդունել Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի կատարման կիսամյակային հաշվետվությունը:

Զեկուցողը թվային արտահայտությամբ ներկայացրեց բյուջեի առաջին կիսամյակի կատարողականի արդյունքները:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Կ. Շահազիզյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն - 4* - *Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի: Միաժամանակ նշեց, որ արտոնությունները հիմնականում տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Կ. Շահազիզյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 5* - *Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող T1701 բուլդոզերը աճուրդ-վաճառքով օտարելու համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող T1701 բուլդոզերը աճուրդ-վաճառքով օտարելու

առաջարկությանը և միաժամանակ, հիմք ընդունելով անկախ փորձագետի կողմից տրված եզրակացությունը սահմանել մեկնարկային գին:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Կ. Շահազիզյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 6* - *<<Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2019թ. N 75-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց համաձայնություն տալ փոփոխություններ կատարել Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2019թ. <<Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 75-Ա որոշման մեջ՝ հավելված 1-ը ընդունել նոր խմբագրությամբ:

Զեկուցողը նշեց, որ փոփոխության արդյունքում հաստիքացուցակի մեջ ներառվելու է Տնտեսական զարգացման պատասխանատուի հաստիքը, ինչպես նաև կրճատվելու են աշխատակազմի 2 առաջատար մասնագետի հաստիքները:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվյանը, Ա. Սարգսյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Կ. Շահազիզյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 7* - *Անհատույց օգտագործման համար տարածքներ տրամադրելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակի համայնքապետարանի վարչական շենքի երրորդ հարկից 1 սենյակ, մինչև 20.12.2020թ. անհատույց օգտագործման տրամադրել <<Երիտասարդ ավանգարդ>> հասարակական կազմակերպությանը և Աշտարակի թիվ 1 <<Մանուշակ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքից՝ երեք սենյակ <<Արմտուռմար>> կրթական-ստեղծագործական հասարակական կազմակերպությանը:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ս. Օվյանը, Կ. Շահազիզյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ, 1 – ԴԵՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

*Լ Ս Ե Ց Ի Ն - 8* - *Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հավանություն տալ 02-001-0135-0166 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.15հա հողատարածքից 0.06հա հողատարածքը բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն - 9* - *Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հավանություն տալ 02-001-0777-0011 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.6հա հողատարածքից 1230քմ հողատարածքը բնակավայրերի հասարակական կառուցապատման փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 10* - *Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հավանություն տալ 02-001-0662-0165 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.76314հա մակերեսով հողատարածքը գյուղատնտեսական արտադրական նշանակության փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 11* - *Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հավանություն տալ 02-001-0437-0105 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.1հա հողատարածքի

նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 12</u> - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հավանություն տալ 02-001-0694-0106 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.25835հա մակերեսով հողատարածքից 0.0383հա հողատարածքը բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 13</u> - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հավանություն տալ 02-001-0662-0159, 02-001-0662-0160, 02-001-0662-0161, 02-001-0662-0162 ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության 0.366հա ընդհանուր մակերեսով հողատարածքից 0.1291հա հողատարածքը բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 14</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ համայնքային սեփականության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելուն և միաժամանակ, առաջարկեց սահմանել մեկնարկային գին:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 15</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելուն և աճուրդ-վաճառով օտարելուն: Միաժամանակ, առաջարկեց սահմանել մեկնարկային գին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Կ. Շահազիզյանը և Ա.Սարգսյանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 16</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելուն և աճուրդ-վաճառով օտարելուն: Միաժամանակ, առաջարկեց սահմանել մեկնարկային գին:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց տրվեցին պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 17</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասը մրցութային կարգով տրամադրել կառուցապատման իրավունքով, միաժամանակ սահմանել մեկնարկային գին:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 18 -* *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող, Ն. Աշտարակեցու հր. N7 հասցեի հարևանությամբ գտնվող անշարժ գույքը աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հիմք ընդունելով անկախ փորձագետի եզրակացությունը, համաձայնություն տալ Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող, Ն. Աշտարակեցու հր. N7 հասցեի հարևանությամբ գտնվող անշարժ գույքը աճուրդ-վաճառքով օտարելուն և մեկնարկային գին սահմանելուն:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 19 -* *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը աճուրդ-վաճառքով օտարելու և մեկնարկային գին հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հիմք ընդունելով անկախ փորձագետի եզրակացությունը, համաձայնություն տալ Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերն աճուրդ-վաճառքով օտարելուն և մեկնարկային գին սահմանելուն:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

*Լ Ս Ե Ց Ի Ն – 20 -* *Աշտարակ համայնքի ավագանու 21.05.2020թ. N 34-Ա և N 35-Ա որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց, հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդեն իսկ ընդունված որոշումներում առկա են

որոշակի սխալներ, փոփոխություն կատարել Աշտարակ համայնքի ավագանու 21.05.2020թ. N 34-Ա և N 35-Ա որոշումների մեջ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2020 թվականի հուլիսի 21-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԱԶԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ